Ի պատասխան «Իրավաբան.նեթ» լրատվական կայքի 2015թ. հուլիսի 16-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժող հասցեագրած գրավոր հարցման հայնտնում ենք.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, ՀՀ ոստիկանության ու ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջև 15.05.2015թ., 27.05.2015թ. և 24.06.2015թ. կնքվել են համագործակցության հուշագրեր՝ համապատասխանաբար իրավաբանական անձանց և քաղաքացական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային գրանցամատյանից, բնակչության պետական ռեգիստրի և տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգերից, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցամատյանից Հանձնաժողովին էլեկտրոնային տվյալների տրամադրումը ապահովելու նպատակով:

Հարկ է նշել՝ Հանձնաժողովն արդեն իսկ օգտվում է նշված տվյալների գրանցամատյանների մի շարք հնարավորություններից: Մասնավորապես՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց անձնական տվյալները հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ անմիջապես ներբեռնվում են բնակչության պետական ռեգիստրի համակարգից, հայտարարագրերի համակարգի տրանսպորտային միջոցների տվյալների շտեմարանն առցանց թարմացվում է ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգից և այլն:

2015 թվականի փետրվարի 19-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» N145-Ն որոշման կապակցությամբ նաև ստեղծվել էր աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրված էին վերոնշյալ պետական մարմինների ներկայացուցիչներ: Այն պատասխանատու էր վերոնշյալ հուշագրերի մշակման, տեղեկատվական բազաների հետ Հանձնաժողովի էլետրոնային հայտարարագրերի համակարգի համակցման և համակարգերի փոխգործունակության տեխնիկական խնդիրները լուծելու համար: Տեխնիկական կապակցումների աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

Միաժամանակ, Հանձնաժողովի առաջարկությամբ ստեղծվել է միջգերատեսչական խումբ («Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 447 – Ա որոշում, 2015 թվականի մայիսի 27), որի նպատակն է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին. փուլ 2» ֆինանսավորման համաձայնագրի պարտավորությունների իրականացման միջոցառումների (օրենսդրական, կազմակերպչական, ֆինանսական) ծրագրի ճանապարհային քարտեզ նախապատրաստելը:

Ինչ վերաբերվում է ԱՄՆ և Արգենտինա կատարած այցերին և դրանց ընթացքում ձեռքբերված համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններին, ապա դրանց մասին տեղեկատվությունն ի սկզբանե տեղադրվել է Հանձնաժողովի կայքէջում և մինչ օրս էլ հասանելի է (http://www.ethics.am/hy/news/item/2015/05/13/news34/):

Ցանկանում ենք նաև տեղեկացնել, որ Հանձնաժողովի կայքէջը մշտապես թարմացվում է և դրանում հաշվետվությունների հրապարակումն իրականացվում է Հանձնաժողովի աշխատանքային ծանրաբեռնվածությանը համապատասխան՝ միջոցառումներին հաջորդող ժամանակահատվածում: